



կազմից որևէ գրական, Ռուսապարակախոսական կամ գիտական երկ, որ բնութագրական է հայոց պատմությանն և կատարմամբ հետաքրքրության արթնացման այս շրջանին: Շրջափուլի ամենաբնորոշ գծերից մեկը հայ իրականության տարբեր կողմերին ծանոթանալու, լուրացնելու հարընթացի լայնությունն է նա համարում, որը ձեռք է բերվել երկու գրականությունների, գրողների շահախնդիր աշխատանքով: Նրանք ուսումնասիրել են հայոց քաղաքական պատմությունը, կենցաղն ու սովորույթները, ժողովրդի հոգեբանությունը, հայ մշակույթի իրողությունները և, հասկանալի է, հրանց երկերը մեծ դեր են կատարել հայկական մշտյո ժողովրդականացնելով՝ էլենդով նրա ճանաչողական արժեքից: Հեղինակը հուշում է, որ այսօր հանիրավի մոռացության ենք տվել և չենք օգտվում ռուսական մամուլի էջերում թարգմանված վիթխարի գրականությունից: Սա, անշուշտ, վերաբերում է նաև մյուս թողոր քննազավառներին, քայլն շատ տեղին է հնչում տվյալ շրջափուլի առնչությամբ: Հիշենք Լաչինովին, Դավիդովին, Պոտտոյին, Ռադիշևին, Գլինկային ևն, որոնց գործերը հարկ եղած չափով չեն օգտագործվում այսօրվա գաղափարական պայքարում: Միևնչեռ այնտեղ թիչ չեն արդիական հնչեբանգները, երբեմն՝ նաև մոռացված փաստեր:

Ի՞նչն էր առանձնապես գրավում հայոց պատմության մեջ, ասենք, Ս. Գլինկային, իր իսկ խոստովանությամբ՝ բարձր, համամարդկային գաղափարները: Ռուս պատմաբանը նշում է, որ մարդկության պատմության մեջ առաջին արդար դատաստանն իրագործվել է Հայաստանում, Հայկի ձեռքով տապալվել է «առաջին զավթիչը», Հայկի սխարանքով պաշտպանվել են մարդկային իրավունքները, անկախությունը: «Հայկն առաջինը ետ մղեց բնությունն այն երկրում, ուր նորոգվեց մարդկային ցեղը».— գրել է նա: Արտաշես Առաջինը, Ս. Գլինկայի ըմբռնմամբ, մեծ էր մարդկայնության տեսակետից. նա ոչ թե նվաճումների, այլ Ասիան հոռմայեցոց մոլեգին իշխանատենչությունից պաշտպանելու էր գրում դեպի արևմուտք. Արա Գեղեցիկը ընտանիքի ու հայրենյաց սերը գերադաս համարեց վիթխարի աշխարհակալ պետության գահից: Այս կարգի մեկնությունները ցույց են տալիս, որ ռուս գրագետներից շատերը հայոց պատմությանն ու մշակույթին կապված էին ոչ միայն զուտ գիտական հետաքրքրասիրությամբ, այլև անկաշառ սրտով ու սիրով:

Հետազոտվող խնդրի տեսակետից, իհարկե, ավելի կարևոր է Ռուսաստանում հայոց բանասիրության ձևավորման շրջանը, որի զուլխավոր դերակատարները Մ. Փ. Բրոսսեն ու Ստ. Նազարյանցն էին՝ իբրև Ռիմաշիիրներ: Բայց իրենց ծանրակշիռ ներդրումն ունեն նաև

Կ. Եզյանն ու Պ. Ծանշյանը, Է. Գիլենն ու Ի. Բերյուլինը, Յու. Վեսելովսկին ու Մ. Էմինը, Բ. Պատկանյանը, Լ. Մանրյանը, Գ. Խալաթյանը, որոնց ընդհանուր ջանքերով ապահովվեց հայագիտության բարձր մակարդակ: Այս շրջանը վերլուծող էջերում բնականաբար ավելի որոշակի ու հստակ են գիտական բնութագրումներն ու գնահատականները:

XIX դ. 40-ական թվականներին է, որ Մ. Փ. Բրոսսեի ու Բ. Պատկանյանի ջանքերով սկիզբ դրվեց հին մատենագիրների երկերի գիտական մեկնաբանությանն ու հայ գրականության զարգացման պատմական ընթացքի իմաստավորմանը: Մտկվան ու Պետերբուրգը դարձան հայագիտության առաջատար կենտրոններ, և շուտով այդ գիտության «ռուսական դպրոց» նվաճումները համաեվրոպական ճանաչում ստացան:

Է. Հակոբյանը հետևողականորեն ցույց է տալիս հայագիտության առաջընթացը: Հաջորդ կարևոր հանգամանքը, որ իրավացիորեն նշում է նա, կապված է մեկ այլ խոշոր հայագետի անվան հետ. Մ. Էմինը «լճոսական փորձ արեց Ռուսաստանի հայագետների ուշադրությունը ընդհանուր քանասիրական հարցերից փոխադրելու հայոց հին գրականության պատմության ուսումնասիրության» քննազավառ, նախ և առաջ ծանրանալով Մովսես Խորենացու Պատմության վրա: Եվ հայագիտությունը (քանասիրությունը) ոչ միայն գնալով լայնացնում էր հայացքը, այլև խորացնում էր հուրը:

Հայագիտության զարգացման քնական արդյունքը եղավ նոր թոռիչը՝ XIX դ. վերջին և հաջորդ հարյուրամյակի սկզբին, նրա բարձրագույն զարգացումը, որի տիրական դեմքերն էին Ն. Մառը, Ն. Անդրոնցը և Հ. Շրեյնին: Պատշաճ մանրամասնությամբ ուսումնասիրվում է ռուսական հայագիտության ամենամեծ դեմքի՝ Ն. Մառի քազմակողմանի գործունեությունը: Նրա գիտական հարուստ ժառանգությունը, դասախոսությունները բարձրացրին հայագիտության հասարակական-քաղաքական կշիռը: Ն. Մառը պատրաստեց արժանավոր աշակերտներ, այլև ուղղություն տրվեց ու գնահատանքի խոսք ասաց քազում հայագետների վաստակի վերաբերյալ:

Գրքում հիշվում են աշխատություններ, հետազոտողներ, որ նպաստել են հայագիտության առաջընթացին, և ընթերցողը տեսնում է, թե ինչ կարևորություն է տրվել գիտության այս քնազավառին ցարական Ռուսաստանի գիտական հաստատություններում, հասկանում, թե ինչ արժանիքների համար շատ աշխատությունների շնորհել են բարձր մրցանակներ, ոսկյա մեծ ու փոքր մեդալներ:

Հայագիտության պատմությունը նոր-նոր է դառնում ուսումնասիրության առարկա: Քանի որ մեզ հետաքրքրող աշխատությունը կարևոր

քայլ է այդ ճանապարհին, նրա արժանիքների, առափնի ևս թերացումների բացահայտումը ինքնանպատակ չէ: Ուստի փորձենք մեր մտտորումներն ու դիտումները ներկայացնել համառոտակի:

Մեզ տարակուսելի է թվում աշխատության կառուցվածքը, որ կապված է շարադրանքի ժամանակագրական սկզբունքի հետ: Թերևս ավելի նպատակահարմար կլիներ այդ սկզբունքով առաջնորդվել ներածության մեջ՝ ուսական հայագիտության ընդհանուր պատկերը ուրվագծելիս, իսկ հետո՝ նյութը խմբավորել ըստ հիմնահարցերի:

Աշխատության մեջ պետք էր նախ հստակորեն աստիճանել թուսակազմի հոյակապական դպրոցի հասկացությունը և ճշտել ու հիմնավորել ուսումնասիրության սահմանները: Այլապես կամայականության երևույթ ունի հեղինակի որդեգրած սկզբունքը՝ դիտարկել ուսերեն գրված երկերը: Իսկ Մ. Բրուսեն, Ստ. Նազարյանցը, Մ. Էմինը, Ք. Պատկանյանը, Ն. Ադոնցը ունեն նաև ֆրանսերեն, հայերեն և այլ լեզուներով տպագրված գրքեր, հոդվածներ: Միշտ է, նրանց հայերեն գործերին դիմում է հեղինակը, երբ առաջադրված հայեցակետերը այդտեղ հիմնավորվում են նոր տվյալներով: Բայց այս դիրքերից օգտագործվում են նաև արդի հետազոտողների աշխատությունները: Երևի նույն պատճառով է. Հակոբյանը չի անդրադառնում, օրինակ, Գ. Ալվերդյանի գործունեությանը, այնինչ նա հայագիտության «նուսական դպրոցի» ներկայացուցիչ է, ինչպես վերևում թվարկվածները: Անտեսանալ է Գ. Ալվերդյանի ուսերեն աշխատությունը Թիֆլիսի համալսարանում մասին: Մյուս կողմից, երևի հարկ չկար հանգամանորեն վերլուծելու Ն. Ադոնցի, Հ. Օրբելու հետևողականության շրջանի գործերը՝ խախտելով ընտրված ժամանակագրական սահմանը:

Որևէ հարցի լուսարանության արդի վիճակը ներկայացնելիս միշտ չէ, որ գրախոսվող աշխատության հեղինակն օգտվել է գիտական հեղինակավոր աղբյուրներից: Խրախուսելի չէ

հանրամատչելի հրատարակություններին դիմելը: Այդ բանն ակնհայտ է հատկապես հանգուցային հիմնախնդիրների առնչությամբ: Խոսելով հայ ժողովրդի ծագման մասին, է. Հակոբյանը գրում է. «Հայ ազգը կազմող ցեղերից ոմանք հայ ժողովրդին են փոխանցել ֆիզիկական կերպարանքը, մյուսները՝ մշակութային ավանդույթները, ուրիշները՝ առավելաբար իրենց լեզուն, որը հետո ներառավ շատ բան մյուսների քառական հարստությունից» (էջ 250): Ինչպես տեսնում ենք, հեշտությամբ, գրեթե թվարանորեն տարբերակված են այն գումարելիները, որ հայ ժողովուրդ են կազմավորել: Գիտականները գրելու են կոտրել մի հարցում, որ այսքան պարզունակ լուծում ունի:

Կարելի է մատնանշել նաև որոշ մանր թերություններ, վրիպումներ: Հայագետների կյանքի ուղին պետք էր հնարավորին չափ հակիրճ ներկայացնել (Ք. Պատկանյանի կենսագրությունը մի քանի էջ է զբաղեցնում): Համեմատաբար տարտամ ու անհասկանալի է Լ. Մսերյանին նվիրված հատվածը: Կան ոչ հստակ ձևակերպումներ. 36-րդ էջում կարդում ենք. «1801—1818 թթ. Ռուսաստանին միացվեցին Վրաստանը և որոշ ադրբեջանական մարզեր՝ նշանակալի թվով հայ բնակչությամբ»: Ակնհայտ է, որ խոսքը առաջին հերթին հակական «մարզերի» մասին է: 82, 87, 88 էջերում հանդիպում է պատմիչ-գրող արհեստական բնորոշումը, մինչդեռ ամբողջ գրքում գործածված պատմիչը լիովին արտահայտում է տվյալ հասկացության բովանդակությունը:

Է. Հակոբյանի մեհագրությունը հայագիտության ամենաթեղմնավոր դպրոցներից մեկի անցած ճանապարհը լուսարանելու և գնահատելու առաջին հաջողված փորձն է: Հուսանք, որ կլինեն նաև մյուս դպրոցներին նվիրված ուսումնասիրություններ, և մի օր կամբողջաճա հայագիտության պատմությունը:

Է. Գ. ՄԱՆՈՅԵՆ

GABRIELE YONAN. Ein vergessener Holocaust. Die Vernichtung der christlichen Assyrer in der Türkei. Gesellschaft für bedrohte Völker. Göttingen-Wien, 1989, 422 s.

ГАБРИЕЛЕ ЕНАН. Забытый Холокауст. Уничтожение христиан-ассирийцев в Турции, Геттинген-Вена, 1989, 422 с.

В работе исследуется геноцид христиан-ассирийцев на исторической родине, в Османской империи, осуществленный со стороны младотурецкого правительства в годы первой мировой войны. Авторы предисловий Тильман Цюльх и профессор Рудольф Макух подчеркивают актуальность книги как предупреждения современникам и напоминания об ужасах человеческой не-

терпимости: в прошлом, как свидетельства того, к чему может привести расовое и религиозное противостояние. Проф. Р. Макух особо отмечает, что попытка османского правительства уничтожить христиан в своей империи была преступлением, для которого невозможно найти никаких, обоснованных исламом мотивов, как бы ни пытались ученые и политики приписать